ԿԱՄՈ ԿԱՐԱՋԱԴԵ

ԼՈՒՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

891.99Ս
Կ-29

ՊԵՏՀՐԱՏ

MAY 2011
891.99մ.
4-29
ԱՍ

ԿԱՄՈ ԿԱՐԱՋԱԴԵ

ԼՈՒՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

(Ժողովրդական առակ)

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼՅԿԵՄ ԿԿ ԿԻՍ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՑԵՐԵՎԱՆ 1938

21 MAY 2013
10065

1176
38

Մրջյունն ու լուն միացան
Սիրով լեղբայրներ դարձան,
Վորսի լելան մի անդամ,
Ու մի առվի դեմ ընկան։
Առվի ափին կանգնեցին,
Մոլոր իրար նայեցին,
Մյուս ափը լուն ցատկեց,
Հպարտորեն հետ նայեց...
Մեր մրջյունն էլ ցատկեց,
Գլխկոնձի ջուրն ընկավ.

— Լու ջան, ոգնի — աղաչեց
— Կյանքիս արևը հանգավ։

Իսկ ճարպիկ լուն հետ ցատկեց
Ու մրջյունին սիրտ տվեց.

— Մի կերպ հասիր են թփին,
Վոր քեզ հանեմ են ափին։

Նստեց մրջյունը մի թփի,
Սպասեց լեղբայր լվիկին

. . . . . .

Լուն եկ ցատկեց, ցատկոտեց,
Ու խոզուկի մոտ վազեց...

— Հազար բարև, խոզուկ ջան,
Հին որերի իմ դրկից,
Շատ եմ խնդրում, խոզուկ ջան,
Մի փունջ ծաղ տուր քու կաշվից։
Առուն ընկավ ընկերս,
Կոտրեց սիրտս ու սերս,
Մազդ պետք է վոլորեմ,
Ամուր, ամուր կապկապեմ,
Ընկերոջս ազատեմ։

— Լավ ես ասում, լու ախբեր,
Մազիս գինը գնա բեր,
Գինը թանկ չի աչքիս լույս,
Բեր ինձ համար քիչ ընկույզ։

Լուն եկ ցատկեց, ցատկոտեց,
Կաղնու ծառի մոտ նստեց...

— Դե ինձ լսիր, ալ կաղնի,
Ինձ ընկույզ մի խնայի,
Վոր տանեմ տամ խոզուկին,
Իբրև նրա մազի գին։
Առուն ընկավ ընկերս,
Կոտրեց սիրտս ու սերս,

Մազը պետք է վոլորեմ,
Ամուր, ամուր կապկապեմ,
Ընկերոջս ազատեմ։

— Ինձ լավ լսիր, լվիկ ջան,
Բեզ չեմ մերժի, ախբեր ջան,
Բայց ագռավին դու ասա,
Վոր ինձանից հեռանա։
Զար ագռավը սևավոր
Ինձ կոցում է ամեն որ
Ձրի կաղինս է ուտում,
Ինձ եկ հանգիստ չի թողնում։

Լուն եկ ցատկեց, ցատկոտեց
Սև ագռավի մոտ նստեց...

— Բարև, ագռավ խնամի,
Ես խնդիրս կատարի,
Դու մեր կաղնուց հեռացի,
Դեպի յերկինք սլացի,
Վոր ինձ կաղին տա կաղնին,
Տանեմ հանձնեմ խոզուկին,
Իբրև նրա մազի գին։
Առուն ընկավ ընկերս,
Կոտրեց սիրտս ու սերս,
Մազը պետք է վոլորեմ,
Ամուր, ամուր կապկապեմ,

Ընկերոջս ազատեմ։

— Ասա տեսնեմ դու լվիկ,
Բերբ՞լ ես ինձ չաղ ճուտիկ...

Լուն ել ցատկեց, ցատկոտեց,
Թռավ թխսի մոտ նստեց...

— Քեզ եմ խնդրում, քույր թխսիկ,
Ինձ նվեր տուր մի ճուտիկ,
Ճուտը տանեմ ագռավին,
Վոր նա թողնի մեր կաղնին,
Վոր ինձ կաղին տա կաղնին,
Տանեմ հանձնեմ խոզուկին,
Իբրև նրա մազի գին։
Առուն ընկավ ընկերս,
Կտրեց սիրտս ու սերս,
Մազը պետք է վոլորեմ,
Ամուր, ամուր կապկապեմ,
Ընկերոջս ազատեմ։

— Գնա դու ինձ կորեկ բեր,
Ճուտիկս տամ քեզ նվեր։

Լուն ել ցատկեց, ցատկոտեց,
Կորեկի հորի մոտ նստեց...

— Հորիկ, հորիկ կլորիկ,
Տուր ինձ մի բուռ դու կորեկ,
Կորեկը տամ թռչուն հավին
Թռչունը պիտի տա ճուտիկ,
Ճուտիկը տամ ագռավին,
Վոր նա թողնի մեր կաղնին,
Վոր ինձ կաղնին տա կաղին,
Տանեմ հանձնեմ խոզուկին,
Իբրև նրա մազի գին։
Առուն ընկավ ընկերս,
Կտրեց սիրտս ու սերս,
Մազը պետք է վոլորեմ,
Ամուր, ամուր կապկապեմ,
Ընկերոջս ազատեմ։

Հորիկն ասաց լվիկին.
— Գնա, ասա մկնիկին,
Թող հեռանա ինձանից
Վոր կորեկ տամ իմ հորից։

Լուն ել ցատկեց, ցատկոտեց,
Թռավ մկան մոտ նստեց...

— Քեզ հյուր լեկա, ալ մուկիկ,
Անգին ընկեր սիրունիկ,
Հորը խնդրեց հեռանաս,
Յեվ կորեկին ձեռք չտաս.
Դու գողություն ել չանես,

Պատվով մնունդ քեզ ճարես,
Վոր հորը ինձ կորեկ տա,
Կորեկը տամ թուխս հավին,
Թուխս հավը ինձ ճուտիկ տա։
Ճուտը տանեմ ագռավին,
Վոր նա թողնի մեր կաղնին,
Կաղնին ինձի ընկույզ տա,
Տանեմ հանձնեմ խոզուկին,
Իբրև նրա մազի գին։
Առուն ընկավ ընկերս,
Կոտրեց սիրտս ու սերս,
Մազը պետք է վոլորեմ,
Ամուր, ամուր կապկապեմ,
Ընկերոջս ազատեմ։

— Գնա կատվին դու ասա,
Վոր մկնիկիս ձեռք չտա...

Լուն էլ ցատկեց, ցատկոտեց,
Ուղիղ կատվի մոտ վազեց։

— Իմ լավ փիսո մլավան,
Հերոս ընկեր պատվական,
Մոտդ լեկա, ինձ լսիր,
Ես խնդիրքս կատարի...
Իմ լավ ընկեր, իմ անգին,
Դու մի ձեռք տա մկնիկին,

Վոր մկնիկը գիրանա,
Թողնի հորից հեռանա,
Վոր հորը ինձ կորեկ տա,
Կորեկը տամ թուխս հավին,
Հավը ինձի ճուտիկ տա,
Ճուտիկը տամ ագռավին,
Վոր նա թողնի մեր կաղնին,
Վոր կաղնին ինձ ընկույզ տա,
Ընկույզը տամ խոզուկին,
Իբրև նրա մազի գին։
Առուն ընկավ ընկերս,
Կոտրեց սիրտս ու սերս,
Մազը պետք է վոլորեմ,
Ամուր, ամուր կապկապեմ,
Ընկերոջս ազատեմ։

— Կաթ բեր լվիկ, վոր խմեմ,
Նոր խնդիրքդ կատարեմ...

Լուն էլ ցատկեց, ցատկոտեց,
Թռավ կովի մոտ նստեց...

— Ծաղիկ կովիկ տուր ինձ կաթ
Կաթը տանեմ մեր կատվին,
Վոր ձեռք չտա մկնիկին,
Մուկը հորից հեռանա,
Վոր հորը ինձ կորեկ տա,

Տանեմ կորեկը թխսին,
Թուխսը պետք է ճուտիկ տա,
Ճուտը տանեմ ագռավին,
Վոր նա թողնի մեր կաղնին,
Կաղնին ինձի ընկույզ տա,
Տանեմ հանձնեմ խոզուկին,
Իբրև նրա մաղի դին։
Առուն ընկավ ընկերս,
Կորրեց սիտս ու սերս,
Մաղը պետք է վոլորեմ,
Ամուր, ամուր կապկապեմ,
Ընկերոջս ազատեմ։

— Ինձանից կաթ ես ուզում,
Բեզանից խոտ եմ ուզում։

Լուն եկ ցատկեց, ցատկոտեց,
Գնաց դաշտից խոտ բերեց,
Խոտը տվեց կովիկին,
Տարավ կաթը մեր կատվին,
Կատուն մկանը թողեց,
Մուկը հեռացավ հորից,
Հորը տվեց շատ կորեկ,
Կորեկը տարավ թուխս հավին,
Թուխսը ճուտիկ նվիրեց,
Ճուտը տարավ ագռավին,

Ագռավը կաղնուց հեռացավ,
Դեպի յերկինք վերացավ.
Կաղնին ընկույզ նվիրեց,
Ընկույզը տարավ խոզուկին,
Իբրև նրա մաղի դին,
Մաղը իրար կապկապեց,
Ամուր պարան պատրաստեց,
Ու մրջյունին ազատեց։

Գլխ. խմբագիր՝ Մկրտիչ Գոբյուն.
Տեխ. խմբագիր՝ Ան. Փասպարյան.
Սրբագրիչ՝ Թ. Հովակիմյան

Գլավլիտի լիցենզիա՝ Դ—4663 Հրատ. 4358.
Գատվեր 123. Տիրաժ 3000.
Թուղթ 74×110 Տպագրական 0,4 մամուլ
Մեկ մամուլում 39960 նիշ. Հեղինակային 1/3 մամ.
Հանձնված է արտադրության 27 նոյեմբերի 1937
Ստորագրված է տպագրելու 7 դեկտեմբերի 1937

Գեռհրատի տպարան. Երևան, Լենինի փող. 65

Q4

«Ազգային գրադարան»
NL0399580

ԳԻՆԸ 40 կ.

96

10065

К. КАРАЗАДЕ

ПЛОХА и МУРАВЕЙ

ГИЗ ССР АРМ. ЕРЕВАН